ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2021-2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

2021թ. օգոստոսի 30-ին տեղի ունեցավ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստ:

Օրակարգ՝

1. 2021-2022 ուստարվա մեկնարկ:
2. Թեմատիկ տրոհումների, առարկայական նկարագրերի և ուսումնական փաթեթների հաստատում:
3. Classroom հարթակի հետ կապված հարցեր:
4. Ամբիոնի կարծիքի հաստատում Կարինե Եսայանի (Սարգսյան) «Սովորում եմ իմ մայրենի լեզուն» ուսումնական ձեռնարկի վերաբերյալ:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վ. Համբարձումյանին: Վ. Համբարձումյանը ներկայացրեց օրակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ. գ. թ., դոց. Ա. Գալստյանը, մ. գ. թ., պ/պ Գ. Խալաթյանը, բ. գ. դ., պրոֆ. Է. Մկրտչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. Հաստատել հայոց լեզվի ամբիոնի դասախոսների կողմից ներկայացված առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և ուսումնական փաթեթները:

2. Classroom հարթակում կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ՝ Կարինե Եսայանի (Սարգսյան) «Սովորում եմ իմ մայրենի լեզուն» ուսումնական ձեռնարկի քննարկումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Մ. գ. թ., դոց. Ս. Թորգոմյանը ներկայացրեց կարծիք ձեռնարկի վերաբերյալ (գրավոր կարծիքը կցվում է):

Առաջարկներ եղան կատարել մասնավոր շտկումներ կապված վերնագրի ճշտգրտման, որոշ տառատեսակների ճիշտ տառադարձության, ձայնավորների

բառասկզբում և բառամիջում ճիշտ արտասանության արտահայտման, նյութի շարադրանքի որոշ անհարթությունների հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Կ. Եսայանի (Սարգսյան) «Սովորում եմ իմ մայրենի լեզուն» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ժ. Կ. Հովհաննիսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

2021թ. սեպտեմբերի 17-ին տեղի ունեցավ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստ:

Օրակարգ՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում:

2. Ս. Մուրադյանի «Ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթը» թեմայով թեկնածուական ատենախոսության քննարկում :

3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ Համբարձումյանին: Ներկայացվեց օրակարգի 1-ին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ. գ. դ., պրոֆեսոր Է. Մկրտչյանը, բ. գ. թ., դոցենտ Ա. Մարտիրոսյանը, մ. գ. թ., պ/պ Գ. Խալաթյանը, բ. գ. թ., դոցենտ Ռ. Ջուլֆայանը: Առաջարկվեց թեմաներին կից ուսանողներին ներկայացնել նաև համապատասխան գրականություն, թեմաների վերնագրերի մեջ կառուցվածքային փոփոխություններ կատարել, ուշադրություն դարձնել թեմաների բազմազանությանը և աշխատանքերի ծավալներին և հատկապես ուսուցման խնդիրներին: Վ. Համբարձումյանը տվեց մանրամասն պարզաբանումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի ամբիոնի կողմից հաստատված ավարտական աշխատանքների թեմաները:

ԼՍԵՑԻՆ՝ Ս. Մուրադյանի «Ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթը» թեմայով թեկնածուական ատենախոսության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ մ. գ. թ., պ/պ Գ. Խալաթյանը, բ. գ. թ., դոցենտ Ս. Ղարիբյանը և բ. գ. թ., դոցենտ Ա. Մարտիրոսյանը:

Ս. Ա. Մուրադյանի «Ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթը» թեմայով ատենախոսությունը նվիրված է հայերենի կարևոր քերականական կարգերից մեկին՝ բայի արժույթին: Ատենախոսը, հիմք ընդունելով

հայ և արտասահմանյան լեզվաբանների ուսումնասիրությունները և տեսակետները, դիտարկել է հայերենի անցողական բայերի կապակցելիությունը իմաստաբանության մակարդակում և քերականական կառուցվածքի տարբեր դրսևորումներում: Մասնավորապես անդրադարձ է կատարվել լեզվական այն իրողություններին, որոնցում նկատելի են բայի արժույթի հնարավոր փոփոխություններ, և ըստ այդմ ներկայացվել է բայի, այսպես կոչված, ենթակաառությունը, ստորոգառությունը, կոչականառությունը, խնդրառությունը և պարագաառությունը:

Անցողական բայերի արժույթի ուսումնասիրման սկզբնաղբյուր է ընտրվել «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» նյութը: Ատենախոսը կազմել է նրանում տեղ գտած համապատասխան բայերի ցանկը, դասդասել կազմությամբ համադրական, ներգործական և պատճառական բայերը և խմբավորել ըստ բառակազմական և քերականական հատկանիշների: Համեմատական քննություն կատարելիս ատենախոսը բայերի իմաստները ճշգրտելու համար հիմք է ընդունել Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը», Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը»:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, վեց գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, ունի եզրակացություններ, օգտագործված տեսական գրականության, բառարանների, գեղարվեստական գրականության գրավոր աղբյուրների և համառոտագրությունների ցանկեր:

Ատենախոսության ծավալը համակարգչային 132 էջ է:

«Ներածություն» բաժնում ատենախոսը կարևորել է հարցի պատմությունը՝ անդրադառնալով հայ և արտասահմանյան լեզվաբանության մեջ երկու տասնյակից ավելի լեզվաբանների համապատասխան աշխատություններում հարցին այս կամ այն չափով վերաբերող կարծիքներին:

Առաջին գլուխը («Հայերենի բայերի արժութայնության ընդհանուր բնութագիրը») ընդգրկում է ժամանակակից լեզվաբանության մեջ արժույթի քննությունը, հատկապես «բայ» խոսքի մասի մակարդակում՝ կապված ենթակայի, ստորոգյալի, կոչականի, խնդրի և պարագայի դրսևորումների հետ:

Այսպես, հայերենի և անգլերենի բայերի արժույթի զուգադրական քննության համատեքստում հեղինակը այն միտքն է հիմնավորում, որ, ի տարբերություն անգլերենի, հայերենում բայի արժույթի դրսևորումներից է նաև կոչականի դրսևորումը:

Կարևորում է նաև, իր տերմինով ասած, ենթակաառության և խնդրառության տարբերությունները հայերենում և անգլերենում: Այստեղ համապատասխան դիագրամներով և աղյուսակներով ներկայացվում են, դարձյալ իր տերմինով ասած, արժույթից զուրկ, միարժույթ, երկարժույթ, եռարժույթ և քառարժույթ կամ բազմարժույթ բայերի կաղապարները:

Երկրորդ գլխում («Անցողական բայերի ենթակաառությունը») անդրադարձումներ է կատարել ներգործական սեռի և պատճառական բայերի արժութային առանձնահատկություններին՝ դիտարկելով ներգործական բայերի դասանշային դասակարգմամբ պայմանավորված չորս խումբ՝ ա) անձնանիշ ենթակա պահանջող բայեր՝ *անիծել, գիտակցել, ընթերցել, մտաբերել* և այլն, բ) ոչ անձնանիշ (կենդանի նշանակող) ենթակա պահանջող բայեր՝ *արածել, կտցել, կտցահարել* և այլն, գ) իրանիշ ենթակա պահանջող բայեր՝ *ժայթքել, շանթահարել* և այլն, դ) տարբեր դասային պատկանելության ենթակա պահանջող բայեր՝ *ավերել, բաժանել, բերել, գերել* և այլն:

Դիտարկելով պատճառական բայերի ենթակաառությունը՝ ատենախոսը ավելացնում է, որ չեզոք և ներգործական սեռի մի շարք բայեր, պատճառական դառնալով, փոփոխվում են թե՛ ըստ արժութային, թե՛ ըստ դասանշային կապակցելիության՝ համապատասխան օրինակներով քննելով պատճառական բայերի ենթակաառությունը ըստ դասերի:

Ատենախոսը իրավամբ նկատում է, որ միջնորդավորված գործողություն նշող բոլոր պատճառական բայերը կապակցվում են անձնանիշ ենթականերին:

Երրորդ գլխում («Անցողական բայերի ստորոգառությունը») քննված է ներգործական սեռի բայերի ստորոգառությունը: Այստեղ կարևոր է համարվում այն, որ ներգործական բայերը իրենց բուն իմաստին զուգահեռ կարող են կիրառվել

եղանակական գործառույթով, և ավելացնում է, որ ստորոգելիական խնդիր պահանջող բայերը սովորաբար չեն զրկվում իրենց խնդրառական արժույթից: Ի տարբերություն սրանց՝ անորոշ դերբայով ստորոգելի պահանջող բայերը, բաղադրյալ ստորոգյալի կազմում հանդես գալով, զրկվում են ուղիղ խնդիր առնելու կարողությունից, ինչպես՝ Հետո *փորձեց մտածել* Սեդայի մասին (ՇԹ):

Չորրորդ գլխում («Անցողական բայերի կոչականառությունը») ատենախոսն անդրադարձել է ներգործական սեռի և պատճառական բայերի կոչականառությանը, գտնում է, որ ներգործական սեռի բայերը կապակցելիության սահմանափակություններ են դրսևորում. կոչականառու են այն բայերը, որոնք կարող են կապակցվել անձնանիշ ենթակային, ինչպես՝ *Քո՛ւյր* իմ, *ամոքի՛ր* սիրտըս վշտաբեկ (ԱԻ): Մինչդեռ պատճառական բոլոր բայերը կոչականառու են, ինչպես՝ *Գագի՛կ*, կրակը *թեժացրո՛ւ* (ՎԱ):

Հինգերորդ գլխում («Անցողական բայերի խնդրառությունը») համապատասխան կաղապարներով և մասնակաղապարներով ներկայացված են ներգործական սեռի միարժույթ (ներգործական սեռի բայ - ուղիղ խնդիր), երկարժույթ (ներգործական սեռի բայ - ուղիղ խնդիր – անուղղակի խնդիր՝ հանգման, միջոցի, անջատման, սահմանափակման, բաղդատության), եռարժույթ (ներգործական սեռի բայ - ուղիղ խնդիր – հանգման անուղղակի խնդիր – միջոցի անուղղակի խնդիր) բայերը, զուգադրական քննությամբ նշված են նաև հայերենի և անգլերենի նույն իմաստով մի շարք բայերի խնդրառական տարբերությունները:

Անդրադառնալով կրկնասեռ բայերին՝ ատենախոսը առանձնացրել է մի շարք բայեր, որոնք բառարաններում ներկայացված են որպես չեզոք սեռի բառային միավորներ՝ *ազդակել, դավաճանել, դիմագրավել, հակակրել, համակրել, նախագահել* և այլն:

Այնուհետև բնագրային զուգահեռ օրինակներով ներկայացրել է նշված բայերի խնդրառական տարբերակները՝ հիմնավորելով այն, որ վերոհիշյալ բայերն առանց իմաստային փոփոխությունների ձեռք են բերել ներգործական և չեզոք սեռերի քերականական հատկանիշները զուգորդելու կարողություն:

Պատճառական բայերի խնդրառությունը քննելիս կարևոր են համարվել պատճառական բայերի և սերող բայի խնդրառական ընդհանրություններն ու տարբերությունները, ատենախոսը ներկայացրել է խնդրառությամբ միարժույթ (պատճառական բայ – ուղիղ խնդիր) և երկարժույթ պատճառական բայերը՝ հետևյալ մասնակաղապարներով՝ պատճառական բայ - ուղիղ խնդիր – հանգման խնդիր, պատճառական բայ - ուղիղ խնդիր – միջոցի խնդիր, պատճառական բայ - ուղիղ խնդիր – անջատման խնդիր, պատճառական բայ - ուղիղ խնդիր – սահմանափակման խնդիր:

Ներգործական սեռի, այսպես կոչված, բայ-ստորոգյալների կապակցելիությունը տարբեր դասային խմբերի անուն խնդիրների հետ դիտարկելիս ատենախոսը դասակարգել է անցողական բայերը՝ ըստ խնդիրների դասային խմբերի, որն առնչվում է բայի արժույթին:

Ըստ ուղիղ խնդրի դասային պատկանելության՝ նշում է խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի բայերի հետևյալ խմբերը՝ անձնանիշ, իրանիշ և այլն, ուղիղ խնդիր պահանջող միարժույթ բայեր՝ դրանք հիմնավորելով բնագրային համապատասխան օրինակներով:

Ատենախոսության մեջ տեղ է գտել նաև անցողական բայերի արժույթի փոփոխության պատճառների քննությունը՝ կապված բառաբարդման, բառածանցման առանձնահատկությունների հետ:

Կազմությամբ բաղադրյալ բայերի արժույթն ըստ քերականական արտահայտության քննելիս ատենախոսը ձևաբանական և շարահյուսական կաղապարներով և մասնակաղապարներով ներկայացրել է կազմությամբ բարդ, ածանցավոր և արմատական ձևույթներով բայերի արժույթը՝ հաշվի առնելով բաղադրիչների միջև առկա քերականական և իմաստային հարաբերությունների բնույթը, որն անվանվում է ներքին արժույթ:

Ատենախոսության վեցերորդ գլխում («Անցողական բայերի պարագաառությունը») կարևորված է ներգործական սեռի և պատճառական բայերի պարագաառությունը: Ատենախոսը հիմնավորում է այն, որ բուն ներգործական և

չեզոք սեռի բայերը և նրանցով սերված պատճառականները միօրինակություն են հանդես բերում պարագաառության տեսանկյունից՝ ի տարբերություն պատճառական բայերի խնդրառության, որի դեպքում նրանք տարատեսակ իմաստաքերականական փոփոխությունների են ենթարկվում:

Վերջում ատենախոսը ընդհանրացրել է նյութի քննության ընթացքում իր եզրակացությունները՝ նշելով, որ հայերենում «արժույթ» ըմբռնումն առնչվում է ենթակայի, ստորոգյալի, խնդրի, պարագայի և կոչականի հետ, որոնք տարբեր զուգորդումներով են հանդես գալիս խոսքում՝ ըստ գերադաս անդամի սեռի և իմաստի պահանջների:

Ըստ արժույթի քանակի՝ ներգործական սեռի բայերը լինում են երկարժույթ, եռարժույթ և հազվադեպ քառարժույթ: Ընդ որում եզրակացության է գալիս, որ կապակցվող միավորներից ենթական, ստորոգելին, կոչականը մենիմաստ են, իսկ խնդիրներն ու պարագաները՝ բազմիմաստ:

Ատենախոսը հայերենի անցողական բայերի արժույթը քննելիս հանդես է բերել գիտական որոշակի պատրաստվածություն, կատարել է ինքնուրույն դիտարկումներ, որոնք կարևոր են ատենախոսության գիտական արժեքի տեսանկյունից:

Աշխատանքն ունի տեսական և գործնական նշանակություն, հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել քերականության ուսուցման դասընթացներում, ինչպես նաև ուսումնական ձեռնարկներ, ուղեցույցներ և դասագրքեր կազմելիս:

Աշխատանքի հեղինակը ծանոթ է մասնագիտական գրականությանը, աշխատանքը կատարված է գիտական պատշաճ մակարդակով: Հեղինակը փորձել է իր բոլոր դիտողությունները հիմնավորել փաստական հարուստ նյութով:

Հետազոտության արդյունքները հիմնավորվում են թեմայի արդիականությունից:

Աշխատանքի վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում նշել որոշ մասնակի դիտողություններ:

1. Ատենախոսությունը կառուցվածքային առումով ունի թերություններ: Աշխատանքի գլուխները բավականին փոքր են, և վեց գլուխների փոխարեն նյութը կարելի էր ներկայացնել երեք գլուխներով՝ ըստ համապատասխան ենթագլուխների (ենթակայի, ստորոգյալի, կոչականի առումների քննությունը՝ մեկ գլխում, խնդրինը և պարագայինը՝ երկու առանձին գլուխներում):

2. Ատենախոսը բաղադրյալ կազմության բայերի արժույթը ներկայացնելիս գործածում է «բարդ բայեր» (էջ 14, 65, 66, 72, 85), «բայական համադրական բարդություններ» (էջ 85), «բայական բարդություններ» (էջ 86, 88, 90), «կազմությամբ բարդ համադրական բայեր» (էջ 87) տերմինները: Կարծում ենք՝ բացակայում է միօրինակությունը, ավելի նպատակահարմար կլիներ գործածել «բայական բարդություններ» տերմինը:

3. Կան մասնավոր առարկություն վերցնող տեղեր բայական բարդությունների, այսպես կոչված, ներշարահյուսական կաղապարներում և մասնակաղապարներում ներկայացված գոյական բաղադրիչի իմաստների վերաբերյալ. «ուղիղ խնդիր և տեղի պարագա» մասնակաղապարում *արմատահատել* բայի համար նշված է «1. արմատները կտրել», 2. «արմատից կտրել» (էջ 91): Կարծում ենք՝ «արմատից կտրել» կառույցում *արմատից*-ը ձևի պարագա է: Նույնը *հիշատակագրել* բայի համար (էջ 90), բացի նպատակի պարագայից՝ «հիշելու համար գրել», կարելի էր նշել նաև տեղի պարագա մասնակաղապարը՝ «հիշատակարանի մեջ մտցնել, հիշատակարանում գրել» [տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (էջ 353), Էդ. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան» (էջ 873)]:

4. Անճշտություններ կան նախադասության անդամների շարահյուսական արժեքների որոշման հարցում՝ *արծաթի ձայնով* արտասանել (էջ 18) (ընդգծվածը ոչ թե միջոցի խնդիր է, այլ ձևի պարագա), *հրդեհից, սիրուց ու տառապանքից* ձուլեցիր դու ինձ, կաղապարները *փայտից* պատրաստում

էին (էջ 59) (ընդգծվածները անջատման խնդիրներ չեն, այլ նյութի բացառական):

5. Աշխատանքում տեղ են գտել տեխնիկական և կետադրական սպրդումներ (էջ 8, 11, 15, 17, 26, 34, 42, 59, 71, 92, 122 և այլն):

Վերը նշված դիտարկումները չեն խոչընդոտում գիտական պատշաճ չափանիշներով կատարված այս աշխատանքի արժեքի ճիշտ գնահատությանը: Ե՛վ գիտական, և՛ տեսական առումով թեման քննված է խորությամբ, փաստական նյութը բերված է տեղին և հիմնավոր, եզրակացությունները միանգամայն համոզիչ են:

Սեղմագիրը և թեմայի վերաբերյալ հրատարակված հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնահարցերը:

Սիլվա Ալբերտի Մուրադյանի «Ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը լիովին բավարարում է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար առաջադրվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ս. Մուրադյանի «Ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ժ. Կ. Հովհաննիսյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 3 նիստի՝ կայացած

ս. թ. հոկտեմբերի 1-ին

Օրակարգ՝

1. Ա. Յուզբաշյանի «Հայոց լեզվի պատմության գործնական աշխատանքների ձեռնարկի» քննարկում:
2. ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի պահպանում և զարգացում» գիտական ծրագրի գործունեության քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին. բ. գ. թ., դոցենտ Ա. Յուզբաշյանը ներկայացրեց իր աշխատանքը: Մ. գ. թ., դոց. Ս. Թորգոմյանը գրավոր ներկայացրեց իր դրական կարծիքը աշխատանքի վերաբերյալ՝ անելով մասնակի դիտողություններ:

Արտահայտվեցին. բ. գ. դ., պրոֆ. Վ Համբարձումյանը դրական գնահատության արժանացրեց աշխատանքը՝ անելով մի քանի դիտարկումներ որոշ հարցերի վերաբերյալ, առաջարկեց տպագրությունից առաջ ուշադրություն դարձնել արված դիտողություններին:

Բ. գ. թ., դոցենտ Ռ. Ջուլֆայանը հարցրեց, թե աշխատանքն ինչ բնույթի է՝ գործնակա՞ն, թե՞ տեսական: Ա. Յուզբաշյանը նշեց, որ աշխատանքը գործնական բնույթի է և արտացոլված է վերնագրում:

Որոշեցին. Ա. Յուզբաշյանի «Հայոց լեզվի պատմության գործնական աշխատանքների ձեռնարկը» երաշխավորել տպագրության (քվեարկության համաձայն):

Օրակարգի երկրորդ հարցի քննարկումը չկայացավ հաշվետվությունը ներկայացնող բ. գ. դ. պրոֆեսոր Լ. Խաչատրյանի բացակայության պատճառով (հարցը հետաձգվեց ամբիոնում հետագա նիստին ներկայացնելու որոշումով):

Ընթացիկ հարցերում քննարկվեց Լ. Ենգոյանի դիմումը իր ատենախոսության՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ամբիոնում կայացրած դրական կարծիքի ժամկետի վերանայման վերաբերյալ:

Որոշեցին. վերահաստատել Լ. Ենգոյանի «Գոյականի ձևաբանական զուգաձևությունները հին հայերենում» ատենախոսության վերաբերյալ կարծիքը՝ նոր ժամկետով:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 4 նիստի՝ կայացած

ս. թ. հոկտեմբերի 26-ին

Օրակարգ՝

ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի պահպանում և զարգացում» գիտական ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության քննարկում:

Օրակարգը ներկայացրեց Վ. Գ. Համբարձումյանը:

Լսեցին. ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի պահպանում և զարգացում» գիտական ծրագրի գործունեությունը (ղեկ. Լ. Խաչատրյան)՝ արդյունքները ներկայացնելով ֆակուլտետի խորհրդի հաստատմանը:

1. Ծրագրի ղեկավար Լ. Խաչատրյանը տվեց «Հաղորդում»՝ անդրադառնալով 2020թ. ծրագրի շարունակման (ըստ իր ձևակերպման)՝ «Ընդհանուր լեզվաբանական տերմինների բացատրությունը՝ բառարանագրության փնջային եղանակով» (2021 թ. 446 էջ),

2. Հայտնեց կազմակերպված կլոր սեղան քննարկման մասին՝ նվիրված բուհերի գրաբարի դասավանդման հարցերին, գործող գրեթե բոլոր դասագրքերը, իր բնորոշմամբ՝ համարելով «ժամանակավրեպ»:

3. Ներկայացրեց ևս մեկ գիտաժողով, ինչպես նաև այդ ընթացքում լույս ընծայած երեք հոդված (հեղ.՝ Լ. Խաչատրյան, Լ. Լ. Խաչատրյան), այլև տպագրության հանձնված մեկ հոդված (անգլերեն լեզվով), տեղեկացվեց երաշխավորված մեկ թեկնածուի ատենախոսություն մասին:

Արտահայտվեցին. Արտաշես Մարտիրոսյան. նշեց, որ սուղ ժամանակում կատարվել է մեծ աշխատանք, որ կարելի է ողջունել:

Ա. Գալստյան. նշեց, որ ինքը մասնակցություն է ունեցել լաբորատորիայի կողմից կազմակերպված երկրորդ գիտաժողովին, իսկ ներկայացված հաղորդումը կարելի է ընդունել ի գիտություն:

Է. Մկրտչյան. ուշադրություն դարձվեց այն հարցին, որ Լ. Խաչատրյանին բնորոշ է ծրագրվածը իրականացնել, և ինքը ողջունում է լաբորատորիայի գաղափարը: Այլև այն, որ հնարավոր է գրաբարի գերազանց իմացություն, բայց ուսանողը գրաբար խոսել չի կարողանում, ինքը դեմ է գրաբարի դասագքերն այդպես որակելուն:

Վ. Համբարձումյանն անդրադարձավ մի քանի հարցի, և մասնավորապես նշվեց հետևյալը.

1. Ամբիոնին ներկայացվելիք հաշվետվությունը կատարած աշխատանքի վերաբերյալ բերվում է հաղորդման ձևով՝ երկու էջի սահմանում,

2. Գիտական ծրագրի հետ կապված հայտնի չեն կատարողների հաստիքային կազմը, գիտական կոմիտեի կողմից ֆինանսավորվող թեմայի դասիչը,

3. Բանավոր հաղորդմանը կից պիտի ներկայացվեին հրապարակումները, (2020, 2021 թթ. տպագրված բառարաններ, գիտաժողովների նյութերի վերաբերյալ գրավոր տեղեկություն, մանավանդ որ նախատեսվում է այն առանձին ժողովածուով հրապարակել, հրապարակված գիտական հոդվածներ),

4. Ամբիոնը տեղյակ չէ հրապարակված գրքերի որակի և բովանդակության մասին (ամբիոնի ոչ մի աշխատակից, բացառությամբ մեկի, նման հրապարակում չի ստացել):

5. Կոռեկտ չէ տարբեր տարիներին բուհերի համար, նաև լեզվի ամբիոնի կողմից լույս տեսած գրաբարի ձեռնարկները համարել «ժամանակավրեպ», ի դեպ՝ լաբորատորիայի կազմակերպած գիտաժողովներից մեկը եղել է այդ թեմայով:

6. Վերջապես սպասելի էր ավելի մանրամասն, համապատասխան նյութերով ներկայացվող հաշվետվություն:

Որոշեցին. պրոֆ. Լ. Խաչատրյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 5 նիստի՝ կայացած

ս. թ. նոյեմբերի 24-ին

Օրակարգ՝ Հրանուշ Զաքյանի «Կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումները հայերենում» ատենախոսության քննարկում:

Ատենախոսությունը մանրամասն, բաժին առ բաժին բանավոր ներկայացրեց ատենախոսը:

Ամբիոնի վարիչ բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը հայտնեց, որ ամբիոնի աշխատակիցներին հանձնարարված է եղել կարդալու ատենախոսությունը և հայտնելու գրավոր կարծիք:

Արտահայտվեցին՝ բ. գ. դ., պրոֆ. Է. Ս. Մկրտչյանը, մ. գ. թ., պ/պ Գ. Լ. Խալաթյանը, բ. գ. թ., դոց. Ա. Ռ. Մարտիրոսյանը, բ. գ. թ., դոց. Ա. Լ. Յուզբաշյանը, բ. գ. դ., դոց. Ա. Վ. Գալստյանը: Ատենախոսության վերաբերյալ ներկայացված գրավոր կարծիքները կցվում են:

Ներկայացված կարծիքները ամփոփեց և իր նկատառումները հայտնեց Վ. Գ. Համբարձումյանը:

Մասնավորապես նշվեց, որ աշխատանքը տարիներ առաջ հաստատված է եղել մեկ այլ վերնագրով, իսկ տարիներ անց ամբիոնի նիստերից մեկում ճշգրտվել է թեման՝ վերը նշված վերնագրով, քանի որ այդ ընթացքում գրվել է թեկնածուական ատենախոսություն և հաստատվել ԲՈԿ-ի կողմից, լույս է տեսել այդ ատենախոսությունը՝ իբրև մենագրություն: Նշվեց նաև, որ ներկայացված սույն աշխատանքում, ինչպես նկատելի է նաև հայտնված կարծիքներում, կան, իրոք, լուրջ թերացումներ՝ կապված տեսական նորագույն գրականությանը ծանոթ լինելու, տասնամյակներ առաջ լույս տեսած մի քանի աշխատություններին թռուցիկ անդրադառնալու, հիմնական խնդիրները գիտական պատշաճ մակարդակով լուծելու և ներկայացնելու, աշխատանքի գիտական նորություն ապահովելու և դոկտորական

ատենախոսություններին ներկայացվող պահանջների բավարարման, քննվող հարցերի վերաբերյալ ճիշտ վերլուծություն կատարելու, շարադրանքի գիտականությունը ապահովելու հետ:

Նիստի ներկաների քվեարկությունը եղել է միաձայն, դեմ և ձեռնպահ՝ չկա:

Որոշեցին. Հրանուշ Զաքյանի «Կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումները հայերենում» ատենախոսությունը չի բավարարում ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջները, ուստի ամբիոնը չի կարող երաշխավորել նրա հրապարակային պաշտպանությունը:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 6 նիստի՝ կայացած

ս. թ. դեկտեմբերի 22-ին

Օրակարգ՝

1. Մագիստրատրոսական (հեռակա ուսուցման 3-րդ կուրս) թեզերի նախապաշտպանություն:
2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ Համբարձումյանին:

Արտահայտվեցին. մագիստրոսական ծրագրի հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողները և նրանց թեզերի գիտական ղեկավարները:

Որոշեցին. մագիստրոսական ծրագրի հեռակա ուսուցման 3-րդ կուրսի աշխատանքները երաշխավորել պաշտպանության:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 7 նիստի՝ կայացած

ս. թ. դեկտեմբերի 30-ին

Օրակարգ՝

1. Տարեկան ուսումական գործընթացի ամփոփում.

2.Կուրսային աշխատանքների կատարման մասին հաղորդում.

3.Ամբիոնում գրվող ավարտական և մագիստրոսական թեզերի կատարման վերաբերյալ հաղորդում.

4. Ընթացիկ հարցեր:

Լսեցին. ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանին, որը ամփոփեց 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացը, անդրադարձավ կուրսային աշխատանքների կատարմանը:

Արտահայտվեցին. բակալավրիական ծրագրի առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի կուրսային աշխատանքերի ղեկավարներ:

Որոշեցին. հաղորդումն ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 8 նիստի՝ կայացած ս. թ. փետրվարի 4-ին

Օրակարգ՝

1. Հեռակա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփում:

2. Ամբիոնում անցկացվող ճյուղային առարկաների ծրագրերի և դասընթացների վերակազմակերպման հարցեր:

3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին. Ամբիոնի վարիչ. բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը ներկայացրեց հեռակա համակարգի մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները: Անդրադառնալով երկրորդ հարցին՝ վարիչը նշեց, որ պետք է վերակզամել ճյուղային առարկաների ծրագրը և դասընթացները:

Արտահայտվեցին. բ. գ. թ., դոց. Ռ. Ջուլֆայանը հավանություն տվեց ամբիոնի վարիչի բարձրացրած հարցին և առաջարկեց բանավոր քննությունները փոխարինել գրավորով: Բ. գ. թ., դոց. Ա. Ռ. Մարտիրոսյանը հայտնեց, որ ինքը ևս համաձայն է ամբիոնի վարիչի առաջարկին և առաջարկեց դասընթացները դարձնել ավելի կիրառական: Նմանատիպ դասերի ընթացքում անդրադառնալ մի շարք հարցերի, ինչպիսիք են արտասանական սխալները, դժվարություն ներկայացնող բառերի ուսուցումը, կապակցական սխալները, գրական համարժեքները և այլն: Մ. գ. թ., պ/պ Գ. Խալաթյանը նույնպես դրականորեն արտահայտվեց և հավանություն տվեց առաջարկին: Բ. գ. դ., պրոֆ. Է. Ս. Մկրտչյանը նշեց, որ պետք է ուշադրություն դարձնել ուսանողի նախադասություն կազմելու, դաս վարելու և նմանատիպ մի շարք այլ հմտությունների վրա:

Բ. գ. դ., դոց. Ա. Վ. Գալստյանը անդրադարձավ դպրոց-բուհ կապին: Առաջարկեց միջոցներ այդ կապը սերտացնելու համար:

Բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը նշեց, որ նախատեսվում է մագիստրոսական կրթական ծրագրում ավելացնել դասընթացներ, որոնք կվերաբերեն անվանի լեզվաբաններ Ա. Ղարիբյանին և Ա. Աբրահամյանին: Առաջարկին հավանություն տվեցին բ. գ. դ., պրոֆ. Է. Ս. Մկրտչյանը, բ. գ. թ., դոց. Ա. Ռ. Մարտիրոսյանը:

Ընթացիկ հարցում լսեցին ամբիոնի դոցենտ բ. գ. դ. Աշոտ Գալստյանի՝ դիմումի հետ կապված հարցը պրոֆեսորի կոչման վերաբերյալ:

Հարցը ներկայացրեց բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համաբարձումյանը:

Արտահայտվեցին. բ. գ. դ., պրոֆ. Է. Ս. Մկրտչյանը, մ. գ. թ., պ/պ Գ. Խալաթյանը, բ. գ. թ., դոց. Ա. Ռ. Մարտիրոսյանը, բ. գ. թ., դոց. Մ. Սողոմոնյանը, բ. գ. թ., դոց. Ա. Յուզբաշյանը, բ. գ. թ., դոց. Ա. Մուրադյանը, բ. գ. թ., դոց. Ս. Ամիրջանյանը:

Որոշեցին. Ելույթ ունեցողները դրականորեն արտահայտվեցին և առաջարկեցին բ. գ. դ., դոց. Ա. Վ. Գալստյանին ներկայացնել պրոֆեսորի կոչման:

Քվեարկությունն անցավ միաձայն:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 9 նիստի՝ կայացած ս. թ. մարտի 24-ին

Օրակարգ՝

1. Ամբիոնի դասախոսների հաշվետվություն (դասաժամերի հարց, դասավանդման արդյունավետություն):

2. Ամբիոնի վարիչի եռամսյա հաշվետվություն:

3. Լ. Ն. Ավետիսյանի, Մ. Ռ. Սողոմոնյանի «Հայոց լեզվի գործնական դասընթաց (բառագիտություն)» աշխատանքի քննարկում:

4. Ընթացիկ հարցեր:

Լսեցին. Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց ամբիոնի վարիչ բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը, նա մասնավորապես անդրադարձավ բանասիրականում և հարակից ֆակուլտետներում հայոց լեզվի դասավանդման դասաժամերի ամբողջական իրականացման և արդյունավետ անցկացման հարցերին, առաջարկեց մեթոդական ավելի կոնկրետ մոտեցումներ ուսուցման արդյունավետությունը ավելի բարձրացնելու համար:

Բ. գ. դ., դոց. Ա. Գալստյանը անդրադարձավ որոշ խնդիրների կապված դիմորդների քանակի նվազման հետ, դպրոցականների գիտելիքների պակասի, որոնք պետք է հաղթահարվեն բուհական կրթության ընթացքում: Կարևորվեց ուսուցումը, գիտելիքների հաղորդումը, քան դժվարությունների մասին խոսելը:

Բ. գ. թ., դոց. Ա. Մարտիրոսյանը նշեց, որ արդյունավետությունը մեծապես կապվում է առաջին հերթին ուսուցչի աշխատավարձի հետ, որը անկախ ամեն ինչից համարվում է առաջնային, սակայն ուսուցումը նման հանգամանքներում չպիտի տուժի:

Վ. Գ. Համբարձումյանը հատուկ անդրադարձավ լեզվի դասերի ժամանակին անցկացմանը, միջանկյալ գրավորների ճիշտ կազմակերպմանը, դասագործընթացին

լսարանային իրականացմանը: Այնուհետև խոսեց այս եռամսյակում կազմակերպված միջազգային գիտաժողովի մասին, ինչպես նաև նախատեսվող Ա. Աբրահամյանի գիտական հանդեսում տպագրված հոդվածների ժողովածուի ընծայման մասին: Եռամսյա հաշվետվությունը ընդունվեց ի գիտություն՝ առանց առարկությունների:

Օրակարգի երրորդ հարցը վերաբերում էր Լ. Ն. Ավետիսյանի, Մ. Ռ. Սողոմոնյանի «Հայոց լեզվի գործնական դասընթաց (բառագիտություն)» աշխատանքին: Վ. Գ. Համբարձումյանը քննարկման դրեց աշխատանքը տպագրության հանձնելու հարցը: Դրական կարծիք արտայատեցին բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը, բ. գ. դ., դոց. Ա. Գալստյանը, բ. գ. թ., դոց. Ա. Մարտիրոսյանը՝ հորդորելով կատարել անհրաժեշտ շտկումներ:

Որոշեցին. ամբիոնի դասախոսներ Լ. Ն. Ավետիսյանի, Մ. Ռ. Սողոմոնյանի «Հայոց լեզվի գործնական դասընթաց (բառագիտություն)» աշխատանքը երաշխավորել տպագրության՝ անհրաժեշտ ուղղումներից հետո:

Ընթացիկ հարցերում ամբիոնի վարիչը քննարկման դրեց սեմինար պարապմունքներ կազմակերպելու հարցը և ներկայացրեց կազմված գրաֆիկը:

Որոշեցին. ըստ ներկայացված գրաֆիկի՝ կազմակերպել ամենամսյա սեմինար պարապմունքներ, որտեղ կներկայցվեն նաև ամբիոնի դասախոսների գիտական աշխատանքները:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և

նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 10 նիստի՝

կայացած ս. թ. ապրիլի 21-ին

Օրակարգ՝

1. ԱՄ 2-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին. Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վ Համբարձումյանին:

Արտահայտվեցին. ԱՄ 2-րդ կուրսի ուսանողները, նրանց ավարտական աշխատանքների գիտական ղեկավարները:

Որոշեցին. Մագիստրոսական թեզերը երաշխավորել պաշտպանության:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և

նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 11 նիստի՝

կայացած ս. թ. ապրիլի 25-ին

Օրակարգ՝

1. ՀԲ 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին. Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վ Համբարձումյանին:

Արտահայտվեցին. ՀԲ 5-րդ կուրսի ուսանողները, նրանց ավարտական աշխատանքների գիտական ղեկավարները:

Որոշեցին. Ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և

նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 12 նիստի՝

կայացած ս. թ. ապրիլի 26-ին

Օրակարգ՝

1. ԱԲ 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին. Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վ Համբարձումյանին:

Արտահայտվեցին. ԱԲ 4-րդ կուրսի ուսանողները, նրանց ավարտական աշխատանքների գիտական ղեկավարները:

Որոշեցին. Ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 13 նիստի՝ կայացած ս. թ. մայիսի 4-ին

Օրակարգ՝

1. Երկրորդ կիսամյակի միջանկյալ գրավորների ամփոփագրերի լրացման վերաբերյալ քննարկում և հաստատում (զեկուցողներ՝ միջանկյալ գրավոր անցկացնողներ):

2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին. Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Համբարձումյանը ներկայացրեց ամփոփագրերի լրացման վերաբերյալ նոր ծանուցումը. ըստ որի ամփոփագրերը պետք է փակել եռօրյա ժամկետում:

Արտահայտվեցին. միջանկյալ գրավոր անցկացնողները:

Որոշեցին. Եռօրյա ժամկետում կատարել համապատասխան լրացումները:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և

նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 18 նիստի՝

կայացած ս. թ. մայիսի 19-ին

Օրակարգ՝

1. Լ. Ն. Ավետիսյանին դոցենտի կոչման ներկայացնելու հարցը:
2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին. Հարցը ներկայացրեց բ. գ. դ., պրոֆ. Վ. Համբարձումյանը՝ նշելով, որ կան համապատասխան բոլոր փաստաթղթերը:

Արտահայտվեցին. բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը, բ. գ. դ., պրոֆ. Ա. Գալստյանը, մ. գ. թ., պ/պ Գ. Խալաթյանը, բ. գ. թ., դոց. Մ. Սողոմոնյանը, բ. գ. թ., դոց. Ս. Ղարիբյանը, որոնք դրական արտահայտվեցին:

Որոշեցին. Լ. Ն. Ավետիսյանին ներկայացնել դոցենտի կոչման:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և

նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հ. 19 նիստի՝

կայացած ս. թ. հունիսի 29-ին

Օրակարգ՝

1. Ավարտական աշխատաքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփում,

2. 2022-2023 ուստարվա ծանրաբեռնավածության և դասաբաշխման հարցի քննարկում,

3. Առկա և հեռակա ուսուցման ծրագրերի առաջին կուրսի մագիտրոսկան թեզերի թեմաների հաստատման հարցը.

4. Ընթացիկ հարցեր:

Լսեցին. Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա ավարտական աշխատաքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:

Արտահայտվեցին. բ. գ. դ., պրոֆ. Ա. Վ. Գալստյանը, մ. գ. թ., պ/պ Գ. Խալաթյանը:

Ամբիոնի վարիչը ներկայացրեց ռեկտորատի կողմից դասաբաշխման վերաբերյալ ներկայացված գրությունը, և նշեց, որ դասաբաշխումն իրականացվում է՝ ելնելով վերը թվարկված կետերից:

Արտահայտվեցին. բ. գ. թ., Ս. Հ. Ամիրջանյան, Ա. Ժ. Մուրադյանը

Լսեցին. բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի առկա ուսուցման առաջին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման հարցը:

Արտահայտվեցին. ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը, բ. գ. դ., պրոֆ. Ա. Գալստյանը:

Որոշեցին. հաստատել մագիստրատուրայի առկա ուսուցման առաջին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաները.

1. Նար-Դոսի վեպերի բառապաշարի նորաբանությունները և նրանց ուսուցումը դպրոցում(«Պայքար», «Մահը»):
2. Հր. Մաթևոսյանի արձակի բառապաշարը և ուսուցումը ավագ դպրոցում («Աշնան արևը», «Տերը»):
3. Շիրվանզադեի արձակի բառապաշարը և նրա ուսուցումը («Նամուս», «Ցավագարը»):
4. Ռաֆֆու «Սալբի» վեպի բառապաշարը և նրա ուսուցումը:
5. Մուշեղ Գալշոյանի «Մամփրե արքան» պատմվածքի բառապաշարը և նրա ուսուցումը:
6. Նար-Դոսի «Զազունյան» վեպի բառապաշարը և նրա ուսուցումը:
7. Ս. Կաուտիկյանի «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» ուղեգրության բառապաշարը և նրա ուսուցումը:
8. Հովհ. Թումանյանի «Մերոնք» պատմվածաշարի բառապաշարը և նրա ուսուցումը:
9. Հովհ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների բառապաշարը և նրա ուսուցումը:
10. Ս. Շահազիզի «Լևոնի վիշտը» պոեմի բառապաշարը և նրա ուսուցումը:

Լսեցին. բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի հեռակա ուսուցման առաջին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման հարցը:

Արտահայտվեցին. ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը, բ. գ. դ., պրոֆ. Ա. Գալստյանը:

Որոշեցին. հաստատել մագիստրատուրայի հեռակա ուսուցման առաջին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաները՝

1. Գ. Խանջյանի «Շարժասանդուղք» պատմվածքների ժողովածուի բառապաշարը և նրա ուսուցումը:
2. Գ. Խանջյանի «Լուր չկա» վեպի լեզուն և նրա ուսուցումը:

3. Գ. Խանջյանի «Հիվանդանոց» վեպի բառապաշարը և նրա ուսուցումը:
4. Էդ. Միլիտոնյանի «Վահագն Վիշապաքաղի արկածները» ստեղծագործության բառապաշարը և նրա ուսուցումը:
5. Էդ. Միլիտոնյանի «Սատանի կամուրջը» վիպակի բառապաշարը և նրա ուսուցումը:
6. Ա. Մարտիրոսյանի «Մազե կամուրջ» վեպի լեզուն և նրա ուսուցումը:
7. Ա. Շեկոյանի բանաստեղծությունների բառապաշարը և նրա ուսուցումը:
8. Ղ. Սիրունյանի բանաստեղծությունների բառապաշարը և նրա ուսուցումը:
9. Վ. Իսրայելյանի «Վաղ, թե ուշ» պատմվածքների ժողովածուի լեզուն և նրա ուսուցումը:
10. Հ. Էդոյանի բանաստեղծությունների պատկերավորման միջոցները և նրանց ուսուցումը:
11. Զ. Խալափյանի «Հեղեղ» վիպակի լեզուն և նրա ուսուցումը:
12. Ռ. Հովսեփյանի «Ճայերը» պատմվածքների ժողովածուի բառապաշարը և նրա ուսուցումը:
13. Ռ. Հովսեփյանի «Ամենատաք երկիրը» ժողովածուի բառապաշարը և նրա ուսուցումը:
14. Վ. Պետրոսյանի «Դեղատուն Անի» վիպակի բառապաշարը և նրա ուսուցումը:
15. Գ. Էմինի բանաստեղծությունների բառապաշարը և նրա ուսուցումը:

Ընթացիկ հարցերում քննարկվեց երկու հարց. առաջինը կապված էր ՀՄ 2-րդ կուրսի 3 թեզերի ղեկավարի փոփոխության հետ: Երկրորդ հարցը վերաբերում էր Հ. Զաքյանի «Կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումները հայերենում» ատենախոսության կրկնակի քննարկանը:

Որոշեցին. 1. Մ. Ռ. Սողոմոնյանին և Ս. Ամիրջանյանին նշանակել հիշյալ թեմաների գիտական ղեկավարներ:

2. Համաձայն ներկայացված դիմումի՝ կազմակերպել կրկնական քննարկում:

Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար Ա. Ա. Ավագյան